

«ԼԱՎ-ՍԱՐ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Բնակելի շենքերի և ենթակառուցվածքների
շինարարության

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Կատարող
“Քոնսեկոարդ” ՍՊԸ
Տնօրեն
Վ.Թևոսյան

Երևան - 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ _____	3
1.1 Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ _____	3
1.2 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը _____	3
1.3 Նախագծման իրավական նորմերը _____	4
1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ) _____	4
1.4.1. Ճարտարապետական լուծումներ _____	4
1.4.2. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր _____	6
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ _____	7
2.1 Տեղադիրքը _____	7
2.2 Կլիման _____	7
2.3 Մթնոլորտային օդ _____	10
2.4 Ջրային ռեսուրսներ _____	10
2.5 Հողային ռեսուրսներ _____	10
2.6 Կենսաբազմազանություն _____	11
2.7 Սոցիալ տնտեսական պայմանները _____	11
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ _____	13
3.1. Ռիսկերի գնահատում _____	13
3.2. Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն _____	15
3.2.1. Մթնոլորտային օդ _____	15
3.2.2. Ջրային ռեսուրսներ _____	15
3.2.3. Հողային ռեսուրսներ _____	15
3.2.4. Կենսաբազմազանություն _____	16
3.2.5. Փոխհատուցում _____	16
Բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլան _____	17
Տեղանքի իրադրային սխեմա _____	19

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Լավ-Սար» ՍՊԸ, իրավաբանական հասցե՝ ք. Երևան Մաշտոցի 20: Գործունեության վայրը՝ ք. Երևան Դավթաշեն վարչական շրջան, 3-րդ թաղամաս 31/1 և Անաստաս Միկոյան փողոց 31 հողամաս:

1.2 Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Նախատեսվող գործունեության անվանումն է՝ բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր՝ բաղկացած 3 բազմաբնակարան շենքերից և սպասարկման ենթակառուցվածքից: Նախագիծը մշակվել է համաձայն 11.12.2007թ. տրամադրված հ.50/1-Ե-459-1140 նախագծման թույլտվությանը /ճարտարապետահատակագծային առաջադրանքի/՝ պահպանելով ՀՀ-ում գործող շինարարական և նախագծային նորմերը և շահագործման նորմատիվ պայմանները: Առաջադրանքի տրամադրման հիմք են հանդիսացել կառուցապատողի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.28072015-01-0120 և հ.28072015-01-0119 վկայականները, 02.04.2008թ. համաձայնեցված հ.50-05/1-Ե-239-329 նախագիծը, Էսքիզային նախագիծը:

Ըստ նշված նախագծման առաջադրանքի 2009 – 2013 թվականներին մշակվել էր աշխատանքային նախագիծ և կառուցվել է բնակելի շենքերից առաջինը: Նշված նախագիծը 2008 թվականի նոյեմբերի 18-ին ստացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության ԲՓ-145 փորձաքննական եզրակացություն:

Սակայն դրանից հետո, ելնելով տարբեր ֆինանսական և տեխնիկական պատճառներից, շինարարությունը դադարել էր:

Ներկայում «Լավ-Սար» ընկերությունը նախատեսում է շարունակել շինարարությունը և կառուցել մնացած շինությունները, այդ թվում երկու բարձրահարկ բազմաբնակարան շենք, որոնք ունեն տարբեր հասցեներ՝ Դավթաշեն վարչական շրջան, 3-րդ թաղամաս 31/1 և Անաստաս Միկոյան փողոց 31 հողամաս: Երևանի քաղաքապետարանի կողմից 26.03.2019 թ. տրամադրվել է թիվ 01/18-07/2-17579-187 ճարտարապետահատակագծային առաջադրանք:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ այդ շենքերը գտնվում են մի հարթակի վրա, իրար մոտ, ուստի ըստ Երևանի քաղաքապետարանը պահանջի և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի պետք է ենթարկվեն համալիր փորձաքննության: Ելնելով այդ պահանջից սույն նախնական գնահատման հայտը վերաբերվում է ամբողջ համալիրին:

1.3. Նախագծման իրավական նորմերը

«ԼԱՎ-ՍԱԸ» ՍՊԸ-ն իր գործողություններում առաջնորդվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանդնաժ միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության պահանջներով:

Դրանք են՝

- ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.)
- ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.) –ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (06.11.2002 թ.)
- Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգիրք (06.12.1985թ.), գլուխ 7
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (11.4.2005 թ.)
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (01.11.1994թ.)
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (21.06.2014թ.):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, «Լավ-Սար» ՍՊԸ՝ ք. Երևան Դավթաշեն վարչական շրջան, 3-րդ թաղամաս 31/1 և Անաստաս Միկոյան փողոց 31 հողամաս հասցեում բնակելի համալիրի կառուցման նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ²:

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի պատրաստում: Նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1. Ճարտարապետական լուծումներ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում՝ խառը կառուցապատման գոտում: Հողամասի ընդհանուր մակերեսը

կազմում է 2.6606հա, երկրորդ և երրորդ շենքերի համար մնացորդային՝ 1.616947+0.5506հա: Հեռավորությունը շենքերի միջև՝ 30 մ:

Կառուցապատման տոկոսը (կառուցապատվող տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին)՝ մինչև 60%, այս դեպքում մինչև՝ $26606 \text{ մ}^2 \times 0.6 = 15963.6 \text{ մ}^2$:

Կանաչապատման տոկոսը՝ 40% և ավելի՝ 10642.4 մ² և ավելի:

Շենքերի բարձրությունը՝ 16 – 18 հարկ:

Հողամասում առկա են քանդման ենթակա 4643 ք.մ. մակերեսով արտադրական նշանակության շենք, և 19.1 ք.մ. մակերեսով պահակատուն: Նախատեսվում է կառուցել 16 հարկանի 2 բնակելի շենքեր և եռահարկ հասարակական սպասարկման մասնաշենքի մի համակառույց, որոնք խմբավորվելով ձևավորում են 2 պարփակ ներքին բակ: Բնակելի շենքերի ստորին 2 հարկերը հատկացված են ավտոհանգրվաններին, ինչը զգալի կրեռնաթափի բակային տարածքները ավտոմեքենաներից: Բնակարանները բազմազան են՝ 1-ից մինչև 4 սենյականոց, 1 սենյականոցները՝ միակողմանի, իսկ մնացածը՝ անկյունային կամ միջանցիկ օդահարմամբ: Տանիքները մասամբ օգտագործվող են:

Տանիքածածկի նյութի գույնը համապատասխանեցնել RAL գունային ներկապնակի 2012 և 3016գույներին: Շենքի կրող համակարգը կարկասապատային է՝ մոնոլիթ երկաթբետոնից, իսկ միջհարկային ծածկերը նախատեսված է իրականացնել միաձույլ ե/բ սալերով: Ճակատներում, որպես հարդարման հիմնական նյութ նախատեսվում է Անիի տուֆը, ինչպես նաև բազալտը՝ ցոկոլային հատվածում: Բնակելի շենքերի միջև ընկած են բացօդյա կայանատեղեր, բարեկարգված տարածքներ: Բոլոր հարկերում աստիճանավանդակի դռները, պատշգամբ-լոջիաների դռներն ու ապակեպատ մասերն իրականացնել հրակայուն ապակուց:

Բնակարանների ջեռուցումը իրականացվելու է անհատական կարգով՝ բնակիչների կողմից:

Նախագծով նախատեսված է արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության համապատասխան միջոցառումներ:

Բնակելի շենքերում նախատեսված է նաև հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու անհրաժեշտ պայմաններ:

Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված սեյսմիկ - III գոտու համար (9 բալ և ավելի):

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման մակերեսը ըստ նախագծի կկազմի՝ 10642.4 մ², մնացածը

կկառուցապատվի, ներառյալ՝ սավվածքները և սպասարկման տարածքները: Կանաչապատման համար նախատեսվում է նաև նոր բուսահողի լիցք, որի կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համաձայնեցված Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է կաղնի, գնդաձև ակացիա, հացենի, ինչպես նաև ծաղկասածիլներ և խոտի սերմ: Այս տեսակները հարմար են Երևանյան լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին: Երևանյան լանդշաֆտում ծառերի կաչողականությունն ապահովվելու է պարտադիր ոռոգման և խնամքի պայմաններում, որի իրականացման պատասխանատուն հանդիսանում է կառուցապատողը:

Ոռոգումն իրականացվելու է տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման ցանցի միջոցով:

Շինարարությունը բետոնի խառնուրդով ապահովելու նպատակով շինհրապարակում տեղադրված է բետոնախառնիչ և երկու ցեմենտի պահեստավորման տարողություն /սիլոս/:

Շինարարության տևողությունը կկազմի՝ 2 տարի երկրորդ շենքի համար, իսկ երրորդ և տարածքի վերջնական բարեկարգման և կանաչապատման համար ևս 2 – 4 տարի, ինչը կհստակեցվի երրորդ շենքի համար նախատեսվող ճարտարապետա-հատակագծային առաջադրանքում:

1.4.2. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ բետոնի խառնուրդի պատրաստման, աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Տարածքում առկա են ջրազիծ, կոյուղու ցանց, հոսանքի գիծ, գազատար, որոնք կառուցվել և միացվել են “Վեոլիա ջուր”, “ՀԷՑ” և “Գազպրոմ Արմենիա” ընկերությունների ցանցին առաջին շենքի շինարարության ընթացքում:

Երկրորդ և երրորդ շենքերի համար գազի միացումները կիրականացվեն բնակիչների կողմից:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Տեղադիրքը

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը գտնվում է Երևան քաղաքի Դավթաշեն համայնքի 3-րդ թաղամաս 31/1 հասցեյում՝ Եղվարդ – Երևան մայրուղու մոտ:

2.2 Կլիման

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է <<տաք>> կլիմայական գոտում: <<Տաք>> գոտու կլիմայական բնութագրերն են՝ ամառ՝ շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին՝ 21 °C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին)՝ 35% ցածր, բարենպաստ լեռնահովտային քամիներ՝ միջին արագությունը 2,0-3,0 մ/վ: Ձմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0 °C-ց մինչև մինուս 5 °C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին) 60-70%, քամու միջին արագությունը՝ 2,0-3,0 մ/վ:

Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտը տեղակայված է Էրեբունի օդերևութաբանական կայանը, որի տվյալներով քամու փչելու ուղղությունը տատանվում է և գերակա ուղղություն չկա: Հյուսիս- արևելյան և հարավ-արևելյան քամիները ավելի շատ են ապրիլին, հարավ-արևմտյան քամիները՝ հունիսին, հյուսիս-արևելյան քամիները՝ հուլիսին և հյուսիս արևելյանը՝ հուլիսին, հարավ արևելյան քամիները՝ հոկտեմբերին:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C ⁰												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Էրեբունի	888	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-2.8	42

Աղյուսակ 2.2 Օդի հարաբերական խոնավությունը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբ. կայանը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Էրեբունի	888	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	67	28

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Տարեկան	Ձնածածկույթը, մմ	
	Ըստ ամիսների													Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը, մմ	Տարվա ձնածածկույթի օրերը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Էրեբունի	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	58	47
	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51		

Աղյուսակ 2.4. Քանու պարամետրերը Էրեբունի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անողմությունների կոնկենտրացիոն, %	Միջին ամսական ատառություն, մ/վ	Միջին տարեկան ատառություն, մ/վ	Ուժեղ քամիներով (Պ. 15մ/վՊ. օտեռի ռամակո	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
															16	17	18
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Էրեբունի	912.1	Հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	1.5	29	22	27	29
			2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7							
		Ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1.9					
			3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6							
		Հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2.8					
			5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3							
		Հոկտեմբեր	6	17	10	10	21	20	10	5	63	1.0					
			2.9	2.5	2.1	2.5	2.3	2.4	2.9	3.5							

2.3. Մթնոլորտային օդ

Օդային ավազանը Երևանում հիմնականում կրում է տրանսպորտային միջոցների ազդեցությունը:

Հայաստանի Հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածության պարբերական դիտացանցը/մոնիթորինգը իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարության <<Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվական կենտրոն>> ՊՈԱԿ-ի (Էկոմոնիթորինգ) կողմից:

2017 թվականին Երևան քաղաքում կատարվել են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործել է շարժական պասիվ նմուշառման 46 դիտակետ և յոթ ստացիոնար դիտակայան (№1, №2, №7, №8, №16-1 №18 և №19), որից երկուսում՝ №2 և №18 կատարվել են միայն ակտիվ (24-ժամյա), իսկ մնացած հինգ դիտակայանում (№1, №7, №8, №16-1 և №19)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2017 թվականի ընթացքում Երևանում ակտիվ նմուշառմամբ վերցվել է օդի 9626, պասիվ նմուշառմամբ՝ 4158 փորձանմուշ, ավտոմատ եղանակով կատարվել է 330814 դիտարկում:

Որոշված ցուցանիշների տարեկան միջին կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ):

2.4. Ջրային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում՝ Հրազդան գետի կիրճի մոտ, գետից մոտավորապես 300 մ հեռավորության վրա:

Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության “Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն” ՊՈԱԿ 2018 թվականի տեղեկանքի Հրազդան գետի վերին ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս): Գետաբերանի հատվածներում /Երևանից ներքև/ ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս): Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է՝ (5-րդ դաս): Վատ որակը պայմանավորված է լուծված թթվածնի, ԹԿՊ₅, ամոնիում իոնի, ֆոսֆատ իոնի, մանգանի, վանադիումի, ընդհանուր ֆոսֆորի բարձր պարունակությամբ:

2.5. Հողային ռեսուրսներ

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային

➤ Պլեռնիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

Մինևույն ժամանակ պետք է նշել, որ ներկայացվող տարածքը ամբողջությամբ կառուցապատված է և այստեղ բաց հողային մակերեսներ չկան:

2.6. Կենսաբազմազանություն

Տարածքը գտնվում է Երևան քաղաքի խառը կառուցապատման գոտում, ամբողջությամբ կառուցապատված շինություններով և արտադրական հանգույցներով, ուստի այստեղ բուսականություն կամ վայրի կենդանիների բնակատեղիներ չկան:

2.7. Սոցիալ տնտեսական պայմանները

Ներկայացվող տարածքը գտնվում է Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանում:

Ստորև բերված են Երևան քաղաքի որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքից¹:

Աղյուսակ 2.5 Երևանի ընդհանուր ցուցանիշները

N	Տարածքը	223 քառ. կմ
1	ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը	0.7 %
2	Գյուղատնտեսական նշանակության հողեր	3 351.2 հա
3	այդ թվում՝ վարելահողեր	915.6 հա
4	Վարչական շրջաններ	12
5	Բնակչության թվաքանակը 2015թ. տարեվերջի դրությամբ	1 073.7 հազ. մարդ
6	ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2015թ.	35.8 %

Մայրաքաղաք Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

¹ www.armstat.am

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գտնվում ՀՀ Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարություններն ու հիմնական գերատեսչությունները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, դրամատների ու սակարանների (բորսաների) ճնշող մեծամասնությունը, զանգվածային լրատվամիջոցների մեծ մասը:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

2017թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 2.6 Երևանի տնտեսության համամասնական տվյալները

✓ արդյունաբերություն`	41.2%,
✓ գյուղատնտեսություն`	1.1%,
✓ շինարարություն`	63.7%,
✓ մանրածախ առևտուր`	76.4%
✓ ծառայություններ`	81.4%:

Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են ամբողջ հանրապետության կապն արտաքին աշխարհի հետ):

Աղյուսակ 2.7. Սոցիալական ցուցանիշներ

Սոցիալական ցուցանիշը	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
Զբաղվածներ, հազ. մարդ	294.3	144.3	160.0
Ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, հազ.մարդ	168.9	104.4	64.5
Աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	17076	-	-

Դավթաշեն վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ և Արաբկիր վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին:

Տարածքը՝ 651.8 հա,
Բնակչությունը՝ 42.207 մարդ

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

3.1. Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- քանդված շինության և ծածկի, ինչպես նաև շինադրի տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում կավելանա աղմուկի մակարդակը:

ա. Մթնոլորտի աղտոտում.

Փոշու արտանետումներ կառաջանան հոյություն ունեցող շինությունների քանդման, ինչպես նաև հիմքերի փորման, հողային աշխատանքների ժամանակ:

Շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ վառելիքի այրման արդյունքում կառաջանան ազոտի և ածխածնի օքսիդների արտանետումներ:

Բետոնախառնիչի շահագործման ժամանակ կառաջանան անօրգանական փոշու և ցեմենտի փոշու արտանետումներ:

Համաձայն “Լավ Սար” ՍՊԸ բետոնախառնիչի ՍԹԱ նորմատիվների նախագծի արտանետումների քանակները հետևյալն են.

- Փոշի անօրգանական (SiO₂ 50%)` 4.793 տ/տարի
- Փոշի ցեմենտի` 0.749 տ/տարի

բ. Աղմուկ

Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում կավելանա աղմուկի մակարդակը: Սակայն այն կկրի ժամանակավոր բնույթ և չի ունենա զգալի ազդեցություն:

գ. Թափոններ

Գոյություն ունեցող շինությունների քանդման արդյունքում կառաջանան բետոնային կառույցների, քարի, ապակու և տանիքների թափոններ, որոնց ընդհանուր ծավալը գնահատվում է 720 – 750 մ³ սահմաններում:

Քանդման թափոնները և շինարարական աղբը կտեղափոխվեն Երևանի քաղաքապետի կողմից հատկացված աղբավայր:

դ. Ջրային ռեսուրսներ

Շինարարության ժամանակ ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանի, ավազի և գրունտի խոնավացման, բետոնային խառնուրդի պատրաստման, ինչպես նաև աշխատողների խմելու կենցաղային նպատակների համար:

Ջրցանի համար օրական նախատեսվում է օգտագործել օրական 1.2 – 1.5 մ³ ջուր, միջին տարեկան` 195 - 200 մ³ ջուր:

Ավազի և գրունտի խոնավացման համար` 0.8 – 1.0 մ³ ջուր, միջին տարեկան` 144 - 150 մ³ ջուր:

Բետոնային խառնուրդի պատրաստման համար` 4 մ³ ջուր, միջին տարեկան` 1040 մ³ ջուր:

Տարածքի ջրցանը և խոնավացումը կատարվում է տարվա տաք և չոր եղանակին, բետոնի խառնուրդը պատրաստվում է բոլոր աշխատանքնային օրերին՝ 260 օր/տարի:

Խմելու կենցաղային նպատակների համար՝ 1.25 մ³ օրական, միջին տարեկան՝ 325 մ³ ջուր:

3.2. Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

Սույն ենթաբաժնում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները՝ ըստ ազդեցության ուղղությունների:

3.2.1. Մթնոլորտային օդ

Շինարարական աշխատանքների ժամանակ օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:

3.2.2. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- հողային աշխատանքների ժամանակ կիրականացվի շինհրապարակի և հանվող գրունտի ջրցան
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևույթային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

3.2.3. Հողային ռեսուրսներ

- Շինարարական նյութերի և քայուղերի պահեստները կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինադրը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված ադրավայր,
- տարածքը կբարեկարգվի:

3.2.4. Կենսաբազմազանություն

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Երևան քաղաքի բնակեցված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում:

Նախատեսվում է ազատ տարածքներում կազմակերպել կանաչապատում՝ սիզամարգի և տեղանքին բնորոշ ծառատեսակներով և տեղադրել ոռոգման ցանց:

Շինարարության ավարտից և կանաչապատման աշխատանքներից հետո ոռոգման ցանցը կմիացվի տարածքում առկա ոռոգման խողովակին: Կանաչ տարածքների ոռոգման համար ջրապահանջը կկազմի՝

$$11000\text{մ}^2 \times 0.003 \text{ մ}^3/\text{մ}^2 = 33 \text{ մ}^3/\text{օր}:$$

Տարեկան ջրապահանջը կախված կլինի տաք եղանակի տևողությունից և ոչ անձրևային օրերի թվից:

Սոցիալական խնդիրներ

Շինարարական աշխատանքների ազդեցությունը կլինի կարճաժամկետ և ոչ բարձր: Բացի այդ, բոլոր վերը թվարկված բնապահպանական միջոցառումները ուղղված են առաջին հերթին մերձակա բնակչության առողջությանը և կենսակերպին չվնասելուն:

Պետք է հաշվի առնել, որ շինարարության ժամանակ կպահանջվի աշխատուժ, ինչը թույլ կտա ապահովել նրանց ընտանիքների համեմատաբար կայուն կենսամակարդակը:

3.2.5. Փոխհատուցում

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցությանը:

Ստորև բերված է բնապահպանական ռիսկերը մեղմացնող միջոցառումների ցանկը և մոնիթորինգի պլանը, որը պարտադիր է և որի պատասխանատուն է “Լավ Սար” ընկերությունը:

Բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլան

Գործողությունները	Հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող Միջոցառումները	Մեղմացնող միջոցառման մոնիթորինգ	Մոնիթորինգի պատասխանատուն
Շինարարական հրապարակի կազմակերպում	Քանդման թափոնների ազդեցություն	<ul style="list-style-type: none"> - Գոյություն ունեցող պահակատան և ծածկի քանդման արդյունքում առաջացած թափոնների հավաքում և հնարավորինս շուտ տեղափոխում Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր, 	Տարածքի զննում	“Լավ Սար” ՍՊԸ Շինարարության կապալառու
Շինարարական աշխատանքների իրականացում	Հողածածկի և մակերևութային ջրերի աղտոտում	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակում համապատասխան տեղեկատվական վահանակների տեղադրում - շինարարական տեխնիկայի սպասարկում և կարգաբերում Երևան քաղաքի տեխ.սպասարկման կայանում: 	Առկայության ստուգում Տարածքի զննում	Շինարարության կապալառու Շինարարության կապալառու
Տրանսպորտային տեղափոխություններ	Երթևեկության ինտենսիվացում Աղմուկի մակարդակի ավելացում Մթնոլորտի աղտոտում	<ul style="list-style-type: none"> - Երթևեկության ժամանակացուցի կազմում և իրագործում - Տրանսպորտային տեղափոխությունները իրականացնել միայն ցերեկային ժամերին - հնարավորության դեպքում օգտագործել խլացուցիչ սարքեր - պարբերաբար ստուգել շարժիչների աշխատանքը և անհրաժեշտության դեպքում կարգաբերել կամ վերանորոգել դրանք 	Երթերի պարբերաբար ստուգումներ	Շինարարության կապալառու

<p>Բետոնի խառնուրդի պատրաստում</p>	<p>Փոշու արտանետումներ</p>	<p>Միլոսների օդահան խողովակները միացնել ջրային տարողության հատակային մասին, ինչը էականորեն կնվազեցնի ցեմենտի արտանետումները</p> <p>Ավազի պահետսը պարբերաբար ջրել՝ խոնավացնել ավազի պաշարները</p>	<p>Արտաքին զննում</p> <p>Արտաքին զննում</p>	<p>“Լավ Սար” ՍՊԸ Շինարարության կապալառու</p>
<p>Տարածքի բարեկարգում</p>	<p>Հողածածկի և մակերևութային ջրերի աղտոտում</p>	<ul style="list-style-type: none"> - Տարածքը մաքրել շինարարական աղբից - Կանաչապատել ազատ տարածքները - Կանաչ տարածքներում տեղադրել ոռոգման խողովակների ցանց 	<p>Քաղաքապետարանի և վարչական շրջանի պատասխանատուների հետ կատարել հանձնման ընդունա գործողություն</p>	<p>“Լավ Սար” ՍՊԸ</p>



Տեղանքի իրադրային սխեմա